

ՊԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Տարեկան 12 ծր.

Հեղաձևայ 6 ծր.

ՄԱՐՏՈՍԱՆՈՒԹՅԱՆ

Տարեկան 12 ծր.

Հեղաձևայ 6 ծր.

ՄԱՐՏՈՍԱՆՈՒԹՅԱՆ

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.


Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »

Տարեկան 2.00 ծր.

Հեղաձևայ 1.50 »



ՎԱՍՏԱՆԻ

ՎԱՍՏԱՆԻ

ԿՐԻՍՏՈՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՍԿԵՆ ԶՈՐԵՓԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՎՅՈՒՄ

Իրաւաւոր էստ լին
տրոշիր

ԿՐԻՍՏՈՐԱԿՈՒԹՅԱՆ

Յարգելի իրենց բաժնեգիրք չը վճարող
մեր բաժնեգիրքներն էլ խնդրուի որ
անմիջապէս իրենց հաշիւը ներկայ
առնեն, որպէս խնայողութեամբ
մէջ կը գտնուինք Այսպէս յայտնում
թող բաւ համարեն, նկատելով թէ
թիւք մը հրատարակելու ծախսերը
զոյզում չեն վերցնելու:

ՍԶԳ. ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԷ
ԴԺԳՈՂՆԵՐԸ

Թէնք ասանկ գասակարգ մը
ունինք, որ բաւական ստուար
թիւ կը կազմէ Անոնք ազգային
վարժարաններէ բնաւ գոհ չեն և
այն կարծիքը ունին թէ օտար
վարժարաններ զրկելով իրենց
դասակները փոխտնակներ կ'ըլ-
լան քիչ ժամանակի մէջ, և այս
համապատասխան հայ վարժարանի
մը ամսական 3-4 ֆր. վճարել
չուցելով, օտար վարժարանի մը
5-10 ֆր. վճարել իրենց ծանր
լեռնար ժամանակ մը, բայց ժա-
մանակ մը միայն. իսկ անկէ վերջ
տանք շատ անգամ այդ օտարէն
այլ գոհ չեն մնար ու կը գիտնեն
ուրիշ օտարի մը, ուրիշ մը և
վերջապէս տեղէ տեղ փոխելով կը
վտանգեն իրենց զաւակներուն ուսում
տրուելուն թանկագին ժամանա-
կը և իրենց վերջին խօսքը կ'ըլ-
լայ շատ քաղաքին մէջ ալ չեն-
քով շնորհքով վարժարան մը չը-
կայ որ զաւակն բան սովորէր:

Թէնք կըսենք թէ այսպէս մը
տնտեսող ու վարուող դժգոհ ծնող-
ները փոփոխամիտներ ու անհամ-
բերներ են Անոնք կուզեն որ 2-3
ասորի նախակրթարան երթալով
զաւակներն քանի մը լեզու գրել
խօսիլ գիտնայ և հաշուազէտ ըլ-
լայ կամ քանի մը ամսուան մէջ
խալտ տարբերութիւն մը տես-
նեն իրենց զաւակին մտային կա-
րողութեան վրայ Անոնք չեն
համբերեր ու կը սկսին իրենց
սոհմանափակ դատողութեամբ
կրթական ծրագիրներ սրբագրել

աշխարհագրութիւնը ու պատմու-
թիւնը աւելորդ նկատելի լեզու-
ներէ մին կամ միւսը անպէտ
տեսնել. և որովհետեւ անոնց այդ
մտացածին ծրագիրներուն չէ
կարելի գոհացում տալ, օրին մէ-
կը յանկարծ տղոց թեզն բռնե-
լով օտար վարժարան մը
կ'առաջնորդեն, հոս գոնէ ֆրան-
սերէն կամ գերմաներէն կը սով-
որի ըսելով. քանի մը ամիս յետոյ
անկէ ալ դժգոհ, կրկին տղոց
թեզն բռնելով կը տանին ուրիշ
օտար վարժարան մը, հոս գոնէ
պուլկարերէն կամ այնինչ լեզուն
կը սովորի կածէլով. Գիտեմ պոյսե-
ցի ընտանիք մը որ իր միակ մանչ
զաւակը ազգ. վարժարանէն առ-
նելէն յետոյ երեք հայ և օտար
վարժարաններ փոփոխելէ վերջ,
ամենէն ալ դժգոհ մնաց. որով-
հետեւ իր 11 տարեկան տղան չը
կրցաւ գիտուն մը(1) ըլլալ: Առջի
օր հայ երիտասարդ մը կը զղջար
իր ֆրանսերէն սովորէլէն և ցաւ
կը յայտնէր պուլկարերէն սովորած
չըլլալուն համար: Կը հանդիպինք
շատերու ալ որոնք պուլկար վար-
ժարան երթալով, հայերէնէ ու
ֆրանսերէնէ զուրկ մնալուն հա-
մար անմխիթար են:

Այն յաւիտենական դժգոհները
և այս այլապէս մտածողները լա-
ւագոյն բան մը ըրած պիտի ըլ-
լային թէ՛ իրենց և թէ՛ ազգին
զաւակներուն, եթէ ճանչնալին
իրենց ուղղիկ օհմանափակ կա-
րողութիւնը և յանձնէին զաւակ-
ներն ազգ. վարժարաններու կրթա-
կան ծրագրին տրամադրութեանց
որ իրենցմէ շատ կարող ձեռքերէ
գծուած ըլլալով, կրնայ հայ տը-
ղուն անհրաժեշտ եղած առարկա-
ները ուսուցանելու և ալ աւելին
եթէ նիւթական լաւ պայմաննե-
րու տակ դրուի:

Իսկ եթէ մեր ազգային վար-
ժարանները նիւթական լաւ պայ-
մաններու տակ չեն գտնուիր,
պատճառը ու պատասխանատուն
կրկին այդ դժգոհներն են, ու
որոնք իրենց կարծ ու սխալ մը
տածումներով օտար հաստատու-
թիւններու կը դիմեն, անոնց կը
վճարեն անբերով ֆրանգներ, մինչ
ազգային վարժարանին կը դժկա-

մակին միայն քանի մը ֆրանգ
տալ:

Ես կը վստահացնեմ թէ ներկայ
պայմաններու մէջ իսկ մեր ազ-
գային նախակրթարանները աւե-
լի լաւ արդիւնք կրնան տալ մեր
տղոց քան ուրիշ օտար նախակր-
թարան: Օտարին տնունը ու լե-
զուն թաղ չը չլացնէ մեզ: Այս
երկրի էն լաւագոյն պայմաննե-
րու տակ գտնուող վարժարաննե-
րը պուլկարականները ըլլալու են
բայց ես կը պնդեմ թէ մեր նա-
խակրթարանները միշտ շատ լա-
ւեն պուլկար նախակրթարաննե-
րէն: Եթէ հակառակը պնդողներ
գտնուին, ես գրաւ կը գնեմ և
կ'առաջարկեմ պուլկար նախակր-
թարանի չորրորդ կարգէն և մեր
վարժարանի չորրորդ կարգէն ե-
րեքական տղայ բաղդատական
քննութեան ենթարկել: Ես ապա-
հով եմ թէ՛ եթէ պուլկար տղա-
քը պուլկարերէն խօսելու մէջ
միայն առաւելութիւն ցոյց տան,
հայ տղաքը քառապատիկ առա-
ւելութիւններ ցոյց պիտի տան
ուրիշ առարկաներու մէջ(2):

Գալով կաթոլիկ միսիօնարներու
վարժարաններուն, ասոնք ալ ի-
րենց հազարումէկ թերութիւն-
ներուն դէմ միայն ֆրանսերէն
կամ գերմաներէն խօսելու (ոչ թէ
գրելու ու թարգմանելու) առա-
ւելութիւնը կը ներկայացնեն:

Իսկ հայ տղուն շահը կը պա-
հանջէ որ մեր ազգային նախա-
կրթարաններուն գոնէ չորրորդ
տարին աւարտէ. տնկէ յետոյ ո՛ր
օտար վարժարան ալ երթայ ա-
պահովապէս իր ընդունուած դա-
սարանին առաջնակարգ աշա-
կերտներէն պիտի համարուի:

Հայ ծնողները այնքէ և պար-
տաւոր են իրեն հայր ու իրր հայ
գոնէ չորս տարի իրենց զաւակ-
ները ազգ. վարժարան զրկելու
համբերատարութիւնը ունենալ
և այս միմիայն իրենց զաւակն

(1) Այս խօսքով չենք ուզեր ըսել թէ
մեր ազգային վարժարանները շատ
նախաճախելի վիճակ ունին, ոչ, բնորոշ-
կառակը շատ ալ թերութիւններ ունին
չորս պէտք է լրացնել ու կանոնաւո-
րել:

րու օգտին համար Այս տողերը
կը գրեմ ոչ թէ ազգասիրական
եռանդով միայն այլ աւելի խոր
համոզումով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐԿԻԱ

Այլեւս Սուլթան Ապտիլ Հա-
միտի մահը մօտալուտ նկատու-
նելով, թէ՛ թուրքիոյ բարձր
գասակարգը և թէ՛ արաւստան-
նի օտար ու թուրք մամուլը
գլխաւորապէս գահաժառանգի
խնդրով զբաղել սկսած են. Հե-
տաքրքիրներու հարցումը սա է.
—Ո՞վ պիտի գահակալէ Համիտէն
յետոյ:

Օսմանեան թագաւորութեան
հաստատման առաջին դարերուն
մէջ, եւրոպական պետութիւն-
ներու նման, գահը ժառանգելու
իրաւունքը սուլթանի երէց
որդուն կը պատկանէր. բայց
սակէ քանի մը դար առաջ այդ
սովորութիւնը փոխուելով, Ալ
Օսմանի ցեղին աւագ անդամը
թագաւոր հռչակել սկսան: Ահա
այս պատճառաւ այսօր թուրքե-
րու մէջ երկու միտք կը տիրէ.
ոմանք Համիտին թագը ու գահը
արքայական օսմանեան գերդաս-
տանի մեծագոյն անդամին սե-
փականացնել կուզեն. ուրիշներ
ըստ հնագոյն և եւրոպական սո-
վորութեան երէց արքայորդուն
թագաւոր հռչակելու կը բաղ-
ձան. բայց որովհետեւ քանի մը
դարէ իվեր ընկալեալ սովորու-
թեան փոփոխումը՝ քաղաքական
ներկայ փոփոխ հանգամանքնե-
րու մէջ՝ կրնայ ծանր հետե-
ւանքներ յառաջ բերել կը նա-
խընտրեն այս անգամուան հա-
մար Մէհմետ Բէշատ էֆէնտին
Սուլթան հռչակելու և ասոր օրո-
վը գահաժառանգութեան օրէն-
քին վերջնական բարեփոխու-
թիւնը ընել:

Հօնորաւէ վէլ. Բոջային հա-
ղորդումին նայելով, Գերմա-
նիոյ վիլհելմ Բ. կայսրը թուր-
քիոյ գահաժառանգութեան մա-

սին իր տեսակետը այս անգամ փոխեր է: Կայսրը մինչև հիմա Սուլթան Համիտին չորրորդ որդւոյն Պիւրհանէտտինի կողմակից էր, իսկ հիմա Մէհմէտ Բէշատ էֆէնտինի կողմը կը բռնէ:

Անկէ զատ Գերման կայսրը «Երիտասարդ թուրքերու» համակրութիւնը չահելու համար Սահմանադրութեան գումարաբանութեան կողմակից ըլլալ ցոյց կուտայ եղբոր Այս մասին Պոլսէն Բարիզու ժէսն թուրքերուն կարգ մը նամակներ եկեր են: Այս նամակները փայլուն գոյներով կը նկարագրեն թէ Պոլսոյ մէջ Սահմանադրութեան կուսակիցները բազմապատկուած են. ըստ լուսաւորեալ եւ ուսեալ դասակարգերուն պատկանողները այդ միտքը կը սնուցանեն:

Թուրք սահմանադրութեան հիմնադիր հռչակաւոր Միտհաթ փաշայի որդին Ալի Հայտար պէյը վերջին օրերս Բ. Դրան աւագանիներէն մէկէն սա իմաստով նամակ մը ստացեր է.

«Զեր հօր բռնած ճամբան շարունակել կուզե՞ք: Ոտքի ելլելու տրամադիր սօփտաներուն առջևը իյնալ եւ անոնց նախագահել կը բաղձա՞ք... Եթէ կը բաղձաք, ազգին ահագին մեծամասնութիւնը ձեզ պիտի հետեւի, ձեր կողմը պիտի բռնէ:

«Ամեն ոք խորապէս համոզուած է թէ Մէհմէտ Բաշիտ էֆէնտին գահակալածին պէս, Միտհաթ փաշայի սահմանադրութիւնը նորէն ժողովրդեան պիտի պարզեւէ: Բնականապէս այդ Սահմանադրութիւնը ժամանակի ընթացքին համաձայն ինչ ինչ փոփոխութիւններ պէտք է կը բէ...»

«Այս խնդիրներու մասին ինչ միտք ու գաղափար ունենալնիդ ինձ իմացունելնիդ կը խնդրուի. որովհետեւ եթէ այդ պարտա-

կանութիւնը ստանձնէք Գոշուտ Հուսեֆարիոյ համար ինչ որ էր, դուք ալ թուրքիոյ համար նոյնը պիտի ըլլաք...»

ՔԻՉ ՄԸ ՅԱՐԳԱՆՔ

Կրիկիոյ Ֆրոնդի վանքի նախկին վանահայր Գեր. Տ. Բարթողիմէոս վարդ. իր տկարութեան պատճառաւ օղափոխութեան համար Եզրպոսէն հոս եկաւ քանի մը ամիս առաջ եւ անցեալները կրկին Եզրպոստ վերադարձաւ:

Կարծենք թէ Տ. Բարթողիմէոս վարդ. ընթերցողաց ծանօթացնելու հարկ չկայ, քանի որ շատեր կարդացած են Զեյթունի Անցեալը եւ Ներկան հատորները որոնց մէջ մանրամասնաբար ներկայացուած է լուսանկարներով հանդիման իշխալ վարդապետի հայրենասիրութիւնը անձնութիւնը եւ քաջութիւնը: Մենք իր բարեկամն ըլլալով երկար տեսակցութեամբ խղճի պարտք կը համարենք խոստովանելու թէ, Տ. Բարթողիմէոս վարդապետի իշխալ յատկութիւնները մազի չափ կտակածելի եւ երկբայելի չըլլալէն ի զատ, չունինք մեր կղերներու մէջ Բարթողիմէոս վարդապետ մը եւ թերեւս ապագային ալ չունենալու դժբաղդութիւնը ունենանք:

Տ. Բարթողիմէոս վարդ. մեր կարգ մը վանահայրերէն չէ, որոնք իրենց պաշտօնավարութեան միջոցին ազգին շահը մտածելէ եւ հայրենիքին օգտակար ըլլալէն աւելի կը ջանան իրենց ապագան ապահովելու զիտուով ոսկիներ զերելու: Մինչ Բարթողիմէոս վարդապետ ազնուութիւն ունեցած է փոխանակ իր ապագան մտածելու, իր հայրենակցաց ուղղական եւ ինքնապաշտպանութեան գործին օգնել:

Տ. Բարթողիմէոս վարդապետի ներկայութիւնը Վառնայի հայութեան համար բարեբաղդութիւն մը պէտք էր նկատուէր. եւ ամեն հայ ըստ աստիճանի պէտք էր իր պարտականութիւնը կատարէր հանդէպ այդ հերոսին: Բայց ցաւ է ըսել եւ դժբաղդաբար կը խոստովանինք թէ, անխտրաբար Վառնայի բոլոր դասակարգն ալ բառին բուն իմաստով նշանակութեամբ թերացաւ իր պարտականութեան մէջ: Թողունք որ չեղան անհասներ որոնք ըստ կարողու-

թեան հայթայթէին այդ հեռոսին առօրեայ ծախքերը. չեղան անհասներ զոնէ իրենց սեղանակից ունենալին այդ անձնուէր վարդապետը, եւ վերջապէս գրէթէ չեղան անհասներ որոնք բարեգալուստ եւ ողջիթ մաղթէին այդ անկեղծ եւ քաջ մարտիկին: Իսկ չէ կարելի չը յիշել պ. Օ. Արապեանի աստիճանին հայ հարուստներ: Ծաւ է ըսել թէ, միայն Վառնայի հայութիւնը չէ որ այս անպատուաբեր ընթացքն ունեցաւ, սոսկ հասարակ հայերս այս յատկութիւնը ունինք որ շատ ցաւալի է: «Պէտք մեզիք եկուր սիրեմ»: Մենք հայերս միայն Տ. Բարթողիմէոս վարդապետին հանդէպ չէ որ կուենանք այս անտարբերութեան ապերախութիւնը: Արժողունքի, Պարտենանք, Բաֆֆիի եւ այլն նման անկաւոր գործիչներու հանդէպ ալ մենք անտարբեր մնացած ենք. նոյնպէս ալ անոնց այրիներու եւ որբերու հանդէպ հայ ժողովուրդը երախտամոռաց դնուած է, իր պարտականութիւնը կատարելու բարեխղճութիւնը չէ ունեցած եւ չունի:

Հայերս պէտք է քիչ մը սթափուինք պարտաճանաչութեան ոգին ունենանք եւ փութանք կատարել մեր տարրական պարտականութիւնը գէթ գործիչներու եւ հերոսներու այրիներուն եւ որբերուն հանդէպ, իբր ազգ, իբր անհատ գիտնանք յարգել եւ պատուել մեր գործիչները եւ հերոսները:

Գ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

ԲՅՑ ՆԱՄԱԿ ԶԱՅ ՀԱՍԱՐՍԿՈՒԹԵԱՆ

Ահա տարուց աւելի է, որ մենք ականատես ենք եղբայրսպան կռուի, Երկու ազգային կուսակցութիւնները, (հնչ. եւ զաշն.) սկսել են իրար կոտորել. եւ իթէ այդպէս շարունակվի, երեւի մենք շատ կարճ ժամանակից յետոյ հանդիսատես կը լինինք միայնպիսի տխուր տեսարանի, որից առաջ կանհետանան վերջին դարի կրօն մեր դժբաղդութիւնները: Դեռ այդքանը ոչինչ... Դարձեալ այսօր մենք անսնունք ենք

անասուններու պէս զիրար կուգին բղթեղ:

— Ընդհարում է, ընդհատեց Աւագապետը ցաւատանջ ձայնով մը, մարդիկ կը մոռնան թէ աշխարհը վաղանցուկ երազ մընէ եւ կեանքն անօր մէկ գեղեցիկ կամ տղեղ երեւոյթը կը մոռնան թէ ափ մը հող եւ պատու մը ձերմակ կտաւ կը մնան իրենց բաժինը. վերջապէս, կը մոռնան թէ երկինքն մէջ աչք մը կայ, որ ամեն բան կը տեսնէ, եւ անոր դատաստան անաւոր ու պատիժը յաւիտենական է: Ո՛հ, սիրելի պէ՛կ, չարիքը չը ծածկուիր հողին տակ... ուշ կամ կանուխ երեւան կ'ելլէ ու մարդուս խղճին վրայ կը ծանրանայ: Կրէք թէ միւս լիւսանքներն եւ կեանքներն բղթեղեցին զիրար... ինչպէ՞ս կըլլայ այդ... միթէ՞ կառավարութիւն չըլլայ, միթէ՞ օրէնք չըլլայ այս իրկրին մէջ: Ի՞նչու համար առաջը չ'առնուեցաւ: Զեմ հասկնալ:

— Ախ, բարի ֆաթի՛ր, ինչպէ՞ս յայտնել պատճառները, մընիջեց ծահ-

— Երեւանի գաւառում այդ հերոսները պաշարոււ են հայկական զիւղեր, բռնութեամբ, մտրակի ոյժով այս կամ այն գիւղը իրար ձեռքից խլոււ են, եւ ըստպատմ են լինել դաշն. կամ հնչակ. պարզ յայտնի է, որքան ձեր անուանից խօսող այդ հերոսները համայնքներ զըրաւեն, բայց այնու ամենայնիւ չեն կարողանում ցանկալի նպատակին հասնել:

Սակայն իրողութիւնը այլ է. ամեն մի ազատ երկրում, որտեղ օրէնքը իր քան ժողովրդի ձեռքին է, այդտեղ կայ ի միջի այլոց խղճի. խօսքի եւ համոզմունքի ազատութիւն որտեղ մարդիկ այս կամ այն հատկութիւնը գաւառներու համար իրար չեն կոտորում:

Ո՞վ է այս ամենի մէջ մեղաւորը. դուք, դուք էք, որ ձեր անտարբերութեամբ աւելի էք խրոխտուում, եւ յեղափոխական սուրբ գործը խայտառակութեամբ հասցնում:

Սոյն նամակով կոչ ենք անում ձեզ ժամանակ է, հասկացէ՛ք օրպէ՛ս լուրջ դրութիւն, եւ ձեր հեղինակութեամբ սանձահարեցէ՛ք այդ «սօցիալիզմի» անուանից խօսող յեղափոխականներին, որոնք չը գիտեն իրանց ինչ անելը... Բաւական է որքան լուցինք, եւ որքան անմեղ արեւն թափեցին:

Իսկ մենք, բանօրներս, որպէս թշուառ ժողովրդի թշուառ գաւառներ, մեր խորին բողոքն ենք արտայայտում այդ անմիտ, եղբայրսպան կոռուի գէմ: Ի դիմաց մի խումբ բանօրներ՝ 11 սեպտ. Խ. Զաքարեան Բախաւան

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԻՐՍԻ գիւղերէն կը գրեն. «Երկու տարի է որ ամեն տեղերէ չափազանց գէշ լուրեր կը լսէինք, բայց մեր ամբողջ Կարսի շրջանը գերծ մնացած էր այդ տեսակ չարիքներէ. սակայն ահա 5-6 ամիսէ ի վեր մենք ալ չարիքներով շրջապատուած ենք. թէ՛, յայտնի արշուանք չէ եղած, բայց Գիւրտերու աւազակային մեծ խումբի ճամբաները կը կարեն, կը կողոպտեն եւ կը սպաննեն անմեղ ճամբորդներ, վերջերս նոր խումբ մը երեւան եկաւ, Բաղաբազըի եւ Թիւրքմէնշայի քերտերը գանդեց կը պահեն կոր իրեն «Ճանաչեալներ, ասոնց միացած է տեղացի քերտ երի-

վարպէկ ճնշուած եղանակով մը:

— Զէ՞ք կրնար...

— Ո՛չ թէ չ'են կրնար, այլ երկար պատմութիւն մընէ... մէկիկ մէկիկ նկարագրելու համար սիրտ պէտք է:

— Մտիկ ըրէ՛ք, ծահվար պէ՛կ, միջամտեց Աւագապետը. գիտեմ թէ կը վարանք համարձակօրէն խօսելու ինծի պէս ֆաթիլի մը հետ. գիտեմ թէ կը տարակուսիք ինչ եւ ըստ այնմ յայտնութիւն մը կը հանէք ձեր բերնէն... Բայց կը խաբուի՛ք. ես մարդկային կերպարանքով հրէջ մը չ'եմ որ դուռներէդ ներս մտնելէ ետքը թոյն կը խառնէ ձեր հացին մէջ: Ես մարդկային թշուառութեան ծնած էակ մընեմ եւ կը թափառիմ ապերձանիկներու մէջ՝ զա՛նք միմիկարելու համար: Արցունքը հոգեւոր դառնութիւնն եղած է, երբ դողողուն ձեռքոս սըրբած եմ: Դուք խղճամիտ մէկը կերեւա՞ք ինծի. ձեր աչքերու մէջ պատկերուած կը տեսնեմ բարութիւնն՝ իր բովանդակ երեւոյթով. փուճ տե՛ղ կը ջանաք ծածկել, իմ թշուառութե-

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

21

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՃԱՋՎԱՐ-ՊԵՊ

(Շար. նախորդ թիւէն)

Ճահվար պէկ նախապէս զգուշութեամբ խօսեցաւ այդ խելացի մարդուն հետ. բայց յետոյ սկսաւ համակրել ու սիրել զինքը: Հարցուց անոր ուրիշ գաղը... Ի՞նչ ազդի պատկանիլը:

— Ի՞նչ ըսեմ... մընիջեց Աւագապետը: Կեանքս կարճ է ու ճամբասանանքս... Կը բաղձամ մարդկու: Թեան վերքերը քննել ու դարման մը տալ. բայց վէրքը չափ է, իսկ դարմանը՝ քիչ: Մանաւանդ այս երկրին

մէջ, ուր թշուառութիւնը մերկացած է. ո՛վ պէկ, աւելի պէտք կայ խղճի եւ արդարութեան: Զը տեսայ ժպիտ մը՝ որ ստուերով մը ծածկուած չըլլար. չը տեսայ ճակատ մը որ խորշով չ'անցնէր անոր վրայէն: Զեմ գիտեմ... Ինծի անանկ կուգայ որ գիւղեմանոցի մը մէջ կը թափառիմ:

— Ժամանակ մը գեղեցիկ էր երկիրը ընդհատեց ծահվար պէկ, Բայց...

— Ի՞նչ եղաւ որ... հարցուց Աւագապետը: Բոլորովին անգիտակից ձեւացնելով ինքզինքը:

— Ով գիտէ... մահացու ստուէր մ'անցաւ երկրին վրայէն, բարի ֆաթիլ:

— Պատերազմ տեղի ունեցաւ:

— Ո՛չ. ներքին խռովութիւն մը...

— Միւս իրաններէն մէջ:

— Միւս իրաններէն, եւ Ֆրանսիոյ միջեւ:

— Ֆրանս... ի՞նչ ազդ է ատիկա:

— Կեանքը ըսելէ մեր լիզուով:

— Պատճառն ի՞նչ էր:

— Ի՞նչ գիտեմ... մարդիկ երբեմն

տասարդութիւնը Աստուծոյ առաջմտածանի Եղիշտեան հետ կը մաքառին: Մաքառողի հայերը Եղիշտեան օգնելով երկար կռիւներ մղեցին եւ աւագակներու ձեռքէն աւարները խլեցին: Այսօր ուրախ եւ ծանուցանելու ուր կառավարութիւնը խուժ մը խաղախներ բերաւ եւ շրջապատեց Բաղարճը եւ թիւրքաւորները քրտա գիւղերը, որոնց բնակիչները նոր հրացաններով զինուած են Տաճկաստանէ հեռու ձանայեղարնի բու հետ»:

Նոյն լրատուն կիմացնէ, թէ այդ քրտա գիւղացիները անցագիրներ հանած են Տաճկաստան մեկնելու 120 տունի չափ. եւ կը ջանան որ մնացածներն ալ մեկնեն:

— ՇԱՄՇԱՍՏԻՆ գաւառէն առնուած տեղեկութիւնները խոշոր ընդհարումներու զարթոյց ըլլալը կ'իմացնեն, հայեր եւ թուրքեր սկսած են իրենց կանոնաւոր երթեւեկութեան ղեկի գիւղերը. սակայն երբեմն տեղեր դեռ անվտանգութիւն կը տիրէ ու յարաբերութիւնները խզուած են տակաւին թուրքերու կողմէ աւագակութիւններ ալ կը գործունէին, ինչ որ իրենց ցիղային ընազդն է, որուն ամենախիստ միջոցներով կարելի է յաղթել:

— Շիրակ Զ և ևս:

Արաշկերտի թիւրքական սահմանից վերջերս բաւական քանակութեամբ անցել են մեր կողմերու: Չանքար անուն կրող թուրք եւ քրդ երիտասարդներ, որոնց մէջ գտնվում են աչքի ընկնող մօլլաներ եւ ֆախիներ, որոնք ամենաեռանդուն կերպով պրօպագանդա են մղում թուրք եւ քրդ ազգայնականութեան մէջ զինվել, անյապաղ կազմակերպվել ու դուրս գալ ապարիզ եւ կռիւ մղել հայերի դէմ: Տեղի ազգայնականութիւնը երկար ու ձգտարներ խաղաղ եւ համերաշխ եղբայրաբար ապրելով միասին չէ կամենում այդ անմիտ գործողութիւնը կատարել. սէրը, եղբայրութիւնը խցելու Այնուամենայնիւ, շատերն չեն անցնում խոյս տալ այդպիսի անմիտ արարմունքից:

Վերջապէս կոյր ամբողջ համոզվելով արեւնարբու գազանների հետ, կատարում են իրանց ոճրագործութիւնը, թաւանելով խաղաղ ազգայնականութեան:

Չանքար խուժը իր պրօպագանդային արարներով շարունակ շրջում է թուրք գիւղերը կազմակերպելու, սակայն այն գիւղը, որ չէ լսում արեւնարբու դիւային խմբին, նրանք սպառնում են այդ գիւղին աւերել եւ թաւանել:

Ինչ կրնաք գուշակել թէ չարքք թշնամի է ու չես՝ անոր խաւարին ձեռքը ջախջախող մը: Հետեւաբար կը խնդրեմ որ անկեղծ ըլլաք ու առանց կասկածելու խօսիք ինծի հետ: Նայեցէ՛ք, վերը՝ սա՛ անուն կապոյտին մէջ, գերագոյն էակ մը կայ... թո՛ղ կայծակ մը զարնէ մեր գլխուն, եթէ դաւաճանութիւն մ'անցնի մեր հոգիէն:

Ճահվար պէկ սարսառած այս վերջին պարբերութիւնը լեռնով, իրեն անանկ եկաւ որ ֆաթիւր մարդ մը չէր, այլ՝ առաքեալ մը, բարի ոգի մը, վերջապէս՝ Աստուծոյ հրեշտակ մը:

Բայց ի՞նչ քէր... ի՞նչ կերպով նրկարարէր երկրին ողբալի դրութիւնը: Դուք՝ ներքին առեւտրի մ'ունէր դէպի՛ կեանքը... ինչպէ՛ս կարենար ճշմարտութիւնը խոստովանելու:

Պահ մը մտածեց՝ յետոյ խորունկ նայեալով մը նետեց ֆաթիւրին վրայ եւ կիցկտար ու հակասական ձայնով մ'ըսաւ.

Շատ անգամ անցել են լեռնային մասի գիւղերը, կատարել են իրանց հրէշութիւնը, թաւանել ու փախցրել են գիւղի հօտը եւ նախիրը ու անցել են նորից թիւրքաց սահմանը:

Թիւրքալ խուժը սեպտեմբերի 23ին գալիս է Մաշխտի գիւղը կազմակերպելու, Չանքար խուժը պատրաստելու: Դիւղի մի մասը չէ համաձայնվում գիւղի վրայ ժամը 12 ին սկսվում է սաստիկ հրացանաձուլութիւն, գիւղը համարեա արեւոյտում է: Սակայն Չանքարներին չէ անցնում փախցնել 15 հատ ոչխար եւ անվտանգ անհետանում են:

ՍԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այրի քահանաներու ամուսնութեան խնդիրը Պոլսոյ մէջ թերթերուն սկսաւ նիւթ մատակարարել: Կ'իմանանք թէ կրօն. ժողովը թէեւ իր սեղանին վրայ դրած է այս խնդիրը, սակայն կարծիքներու տարբերութեան պատճառաւ եղբակցութեան մը չէ հասած: Ժողովականներէն ոմանք հարկ դատած են գաւառական առաջնորդներու եւ կարծիքին դիմել:

— Կարնոյ Սանասարեան վարժարանի խնամակալութիւնը՝ որ Կ. Պոլսոյ մէջ կը գտնուի, իր վերջին նիստին՝ պատրիարքի նախագահութեամբ -- նկատելով թէ վարժարանին երեք տեսուչներու պաշտօնավարութիւնը ապարդիւն եղաւ մինչեւ ցարդ, ընդհանուր տեսուչ կարգած է փաստաբան Գրիգոր Էֆ. Զաքարեանը, որ վարժարանին թէ վարչական եւ թէ ուսումնական մասը միանգամայն պիտի վարէ, իրեն աշակից ունենալով՝ նախկին ապարդիւն երեք տեսուչները:

Յայտնի է թէ վարժարանին բարերարը այդ երեք տեսուչները Եւրոպայի համալսարաններուն մէջ մասնաւորապէս պատրաստած էր, որպէսզի անթերի եւ արդիւնաւոր պաշտօնավարու-

թիւն մը ունենան. Բայց դժբաղդաբար ոչ բարերարին եւ ոչ ազդին ակնկալութիւնը իրականացաւ. եւ Սանասարեան հաստատութիւնը թաղային նախակըրթարանի մը արդիւնքը միայն կրցաւ աւելցնել: Այդ համալսարանականները Պէրպէրեանի մը, Գուրգէնի մը քառորդ արժէքը չը կրցին ներկայացնել, եւ այսօր այդ երեք համալսարանականներէն նախամեծար կը համարուի ոչ համալսարանական փաստաբան մը:

— Ժողով Կաթիկէ կեղծ անուն տակ 18-20 տարեկան, երկար հասակով ու նիհար երիտասարդ մը կովկասէն Եւրոպայ անցնելով, ինքզինք քաղաքական սպանութեան մը պատճառաւ հալածուած Սարգիս Կաթեանցի որդին ցոյց կուտայ ու գումարներ կը շորթէ եղբր բարեսիրտ ազգայիններէ: Սարգիս Կաթեանց կը խնդրէ հայ թերթերէն յայտարարել, թէ այդ երիտասարդը խաչագող մընէ, որ կըրնայ Եւրոպայէն Պալէստինայ թերակղզին եւ Ամերիկա անցնել, որովհետեւ կ'ըսէ: Սարգիս Կաթեանց, իմ ստացած նամակներից երեւում է որ դրան աջողվում է մեծ գումարներ կորզել: Որքա՞ն շնորհակալ կը լինէի հայ դաշուլից, եթէ նա ինձ օգնէր այդ խաչագողին արդարութեան ձեռքը յանձնելու գումարով:

— Սղէքսանտրիոյ մէջ նոր հրատարակուի սկսած ԿՐԱԿ անուն կաթիր թերթը դադարած է կառավարութեան միջոցաւ:

— Սղէքսանտրիոյ Պողոսեան վարժարանի տեսուչ Տ. Սմբատ Բիւրատը պաշտօնանկ ընող ժողովրդական կուսակցութիւնը, վարժարանն ալ գոցելէ յետոյ հիւսիսը զանգուած է Գահիրէ որ Առաջնորդ հայրը գայ. բայց Առաջնունի հայրսուրբը աղաւնիի

— Ճահվար պէկ... գիտցէ՛ք թէ ինծի համար առեւտրի ժողովուրդ մը չըկայ: Ես կատեմ միմիայն ա՛յն ձեռքերն որոնք չարք կը գործեն: Միթէ՞ Սասունոյ ստեղծածը չէ կեանքը... միթէ՞ անիկա հոգի չ'ունի վատը՝ կուզէ կեանքը ըլլա՛, կուզէ՛ միւսը՝ ման, ամենուն նողկանք կը պատճառէ: Անմեղներու արիւնը չը ծածկուի Սասունոյ աչքէն:

— Ո՛վ իր խղճին տէրն է այս երկրին մէջ... Ո՛չ մէկը կարծես թէ արդարութիւնը ճշտուած է... բաւական է որ զօրութիւն մը ունենանք ձեռքերին, բաւական է որ ներքին վատ զրդու մը թեւադէ մեզ, անմիջապէս ղէմքերն գտնուած ակարին վրայ կը յարձակինք ու զայն կը ճգմենք:

Աւագակապետը թափանցած էր Ճահվար պէկի հոգեւոյն է՛ն խորունք ծալքերը... Զէր կասկածելով թէ՛ կեղծութիւն էր խօսածը, Հետեւաբար աւելի անոր սրտին մօտենալ ուզեց, անոր զգացումներուն չփոփոխուեց:

Նման երկչոտ եւ բուխ սիրտ մը ունենալով, չէ ուզեր ժողովրդի կոչին անձամբ պատասխանել եւ առարկել է թէ հիւանդ ըլլալով չը կրնար գալ:

— Կաթիկէի սակաւ նուիրան Տէր Տաճատ վրդպ. Մելքոնեան շորթը թիւթի օր քաղաքէս մեկնեցաւ դեպի Սօֆիա, ուր պիտի ներկայանայ ներքին գործոց նախարարին, թերեւս նախարարապետին ալ: Կը յուսանք թէ իշխանապետութեան բարձր շրջանակներուն ճանօթ եղող ազգայիններ պիտի փութան նուիրել իրենց աշակցութիւնը, որուն շատ պէտք ունի նուիրակ հայր սուրբը:

ԹԻՒՐԻՔ ԿԱԶԵԹԱԼԱՐ

Հէր միւշկիլին հալլի, հէր միւշա-նա՛թը միւշկիլին տէֆու իզալէսի, հանի հէր տէրտէն չարէսի՝ հիշ պիւր գուլէի լիտան վէ՛ հիշ պիւր անքամը քէլիթաթ իլէ օլմաղ. մէսէլա «Ֆիւլան հօճա թէ՛ մամ գըրգ երլ մէտընէտէ ա-րապի ֆարսի օգուտուշ Իյսայը Մուսայը ետուտուշ չօք ալիմիթը» տէնիթ՝ ֆէզաթ՝ թէրազգիյաթը հաղընէ՛ հիշ պիւր իշէ հարամատըր իշլին զիլ կիպի զուրնա կիպի ատամ տըր. ֆէրասէթ վէ միւշալա՛նաթը պարիզ օլմայն ինկիլիզլէր կիպի միւթէֆէնիյն օլմազ. ատուլ հազգանիէթ վէ ինսանիյէթ պիլմէյն՝ Ծրանսըզար կիպի միւթէ-մէտիյն օլմազ. Սօկատար, Նարօ-լէնար, Կըլատսիմար, Պրզմարգար, Օյամալար վէ թօկօլար վէ տահա սա-յիլէլէր, արապա պիլիթիլէր իշլին մի օ գատար չէօնէթլըար օլմուշար վէ աճապ չիմիյէ գատար հա՛նկի ա-րապա պիլէն հօճատան վէ ուլէմա տան հա՛նկի միլլէթ վէ հէօքիմէթէ ճուղի պիւր էսէրը ֆայիտէ օլալէլիշ. տուրմալը կայն չաթլաթսըն, թէս-պիւր սալլալար վէ վիալէր օքուտուն:

Ահ էֆէնաթ, մէմալիքի Օսմանիյէ՛, թահա պիլմէ՛մ նէ՛յէնէտէ պու խայա-լաթ վէ պու թէսսիւպաթը պաթըլէ իշլինտէ բէրվէրաէ օլաճազ, հէօքիմէթիլին ուզուն միւտտէթ տէվամը իշլին՝ պուլըն՝աղը շու մէնհուս էհվալի

— Բարեսիրտ պէկ, կը տեսնեմ թէ Աստուած ձեր հոգեւոյն մէջ ան-նման խիղճ գրած է, մըմիլեց Աւա-զակապետը ծանր ու թրթռացող շնչով մը: Երանի՛ ձեզ, որովհետեւ հա՛նկիստ էք, որովհետեւ ահա ուր ծանրութիւն մը չէք զգար... որովհետեւ ճառագայթ մը կը ցոյց տաք աչքերն հանդէպ եւ դուք չէք տեսնել չարագործներուն աչքին պատկերացած սեւ ու փոթորկալի ամպերը, Երանի՛ կուտամ ձեզ, որովհետեւ հա՛նկիւն ձեռք պիտի վայելէք հօր մը սիրելի դաւակին պէս: Ափ մը հող եւ պատառ մը կտաւ երբեմն յաւիտենականութիւն մը կը պատրաստեն... Դիտեցէ՛ք թէ ոճրագործը հանգիստ չէ՛ ո՛չ ափ մը հողին մէջ եւ ո՛չ ալ պատառ մը կտա-ւին տալի: Ահա՛ անոր յաւիտենական պատիժը:

(Շարունակելի)

